

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (ՄԱՍ 1)¹

Վարդան Պողոսյան

2013-2015 թթ. Սահմանադրական բարեփոխումների
մասնագիտական հանձնաժողովի անդամ

Նորա Սարգսյան

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ինչպես 1995 թ. խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (հոդված 6, մաս 2), այնպես էլ Սահմանադրության 2005 թ. խմբագրությունը² (հոդված 6, մաս 1) նախատեսում էին դրույթ այն մասին, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 3-րդ հոդվածը միաժամանակ ամրագրում էր, որ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք (մաս 3):

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության³ 5-րդ հոդվածը, ի տարբերություն Սահմանադրության սկզբնական տեքստի և դրա 2005 թ. խմբագրության, հրաժարվել է Սահմանադրության անմիջական գործողության համընդհանուր ամրագրումից (մաս 1)՝ անմիջական գործողությունը պահպանվելով միայն մարդու հիմնական իրավունքների և ազատությունների մասով (հոդված 3, մաս 3):

Հոդվածում նախ և առաջ վերլուծության են ենթարկվում Սահմանադրության «անմիջական գործողություն» հասկացության ծագումնաբանությունը, դրա էությունը և սահմանադրական ամրագրման անհրաժեշտությունը (I), ապա ներկայացվում են հիմնական իրավունքների անմիջական գործողության սահմանադրական ամրագրման իմաստն ու անհրաժեշտությունը (II), որից հետո անդրադարձ է կատարվում գործնական կարևորության այն հարցին, թե արդյո՞ք իրավական նորմերի գործողության աստիճանակարգությունը նույնանում է դրանց կիրառման աստիճանակարգության հետ (III):

I. Սահմանադրության «անմիջական գործողություն» հասկացության էությունը և պատմական զարգացումը

Սահմանադրական նորմերի «անմիջական գործողության» անհրաժեշտ նախադրյալներն են սահմանադրության նորմատիվությունն ու գերակայությունը: Ժամանակակից սահմանադրությունների պարագայում ինքնին ենթադրվող այս հատկանիշները, սակայն, պատմական զարգացման երկարատև ճանապարհ են անցել:

¹ Հոդվածի 2-րդ մասը հրատարակվել է «Պետություն և իրավունք» 2020 N 2(87) համարում:

² Ընդունվել է 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով, ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում Հոդ. 1426:

³ Ընդունվել է 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

Սահմանադրության նորմատիվության ու գերակայության պատմական հիմքերը դրվել են 1787 թ. **Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությամբ**: Դրա 6-րդ հոդվածի 2-րդ մասը, առաջնային նպատակ ունենալով սահմանել ԱՄՆ սահմանադրության և դաշնային օրենքների գերակայությունը նահանգների սահմանադրության և օրենքների նկատմամբ, արտացոլում էր նաև Սահմանադրության գերակայության գաղափարը՝ ընդգծելով, որ օրենքները պետք է ընդունվեն ի հետևումն Սահմանադրության¹: Օրենսդրի կաշկանդվածությունը Սահմանադրությամբ բխում է նաև առանձին հիմնական իրավունքների ձևակերպումներից²: Սահմանադրության գերակայության գաղափարի հիմնավորումը հստակորեն արտացոլված էր արդեն 1788 թ. Ֆեդերալիստ 78-ում, որտեղ ամերիկյան Սահմանադրության հիմնադիր հայրերից մեկը՝ Ա. Համիլտոնը, նշում է. «Չկա մի դիրքորոշում, որը կախված է ավելի պարզ սկզբունքներից, քան այն, որ պատվիրակված մարմնի յուրաքանչյուր գործողություն, հակառակ այն հանձնարարականի, որի ներքո այն իրականացվում է, անվավեր է: Հետևաբար, ոչ մի օրենսդրական ակտ, որը հակասում է Սահմանադրությանը, չի կարող վավեր լինել: Դա հերքելը կնշանակեր այնպիսի, որ ներկայացուցիչն ավելի բարձր է, քան իր ղեկավարը, որ ծառան վեր է իր տիրոջից, որ ժողովրդի ներկայացուցիչները գերակա են հենց իր՝ ժողովրդի նկատմամբ (...): Սահմանադրությունը պետք է նախապատվություն ունենա օրենքի նկատմամբ, ժողովրդի մտադրությունը՝ իր ներկայացուցիչների մտադրության նկատմամբ»³:

Ավանդաբար ԱՄՆ Սահմանադրության գերակայության և դրա նորմերի դատական վերահսկողության խորհրդանիշ է դիտվում 1803 թ. Մերբուրին ընդդեմ Մեդիսոնի գործով Գերագույն դատարանի վճիռը⁴, որով անվավեր ճանաչվեց սահմանադրությանը հակասող օրենքը, և դրվեցին դատական վերանայման ինստիտուտի

¹ «Սույն Սահմանադրությունը և Միացյալ Նահանգների օրենքները, որոնք պետք է ընդունվեն ի հետևումն դրան, և Միացյալ Նահանգների իշխանության ներքո կնքված կամ կնքվելիք բոլոր պայմանագրերը երկրի գերագույն օրենքն են, և յուրաքանչյուր նահանգի դատավոր կաշկանդված է դրանով՝ անկախ որևէ նահանգի սահմանադրության մեջ կամ օրենքում հակառակը սահմանված լինելուց» (*թարգմանությունը հեղինակներիին է*): Միացյալ Նահանգների Սահմանադրության հայերեն (արևմտահայերենով) առավել ճշգրիտ ամբողջական թարգմանության համար տե՛ս **3. 3. Չաքմազեան, Ընդարձակ Բառարան Անգլիերեն-Հայերեն, Երան Գրատուն, Պոսթըն, 1922, էջ 1379-1402**: Արևելահայերեն թարգմանության համար տե՛ս **Հ. Խաչատրյան, Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրությունը (քաղաքական-իրավական վերլուծություն)**, Եր., 1991, էջ 90-138:

² Օրինակ՝ ԱՄՆ Սահմանադրության 1791 թ. առաջին սահմանադրական փոփոխության 1-ին հոդվածը ամրագրում է. «Կոնգրեսը չպետք է իրապարակի օրենքներ, որոնք սահմանում են որևէ կրոն կամ արգելում են նրա քարոզը, սահմանափակում են խոսքի կամ մամուլի ազատությունը, ժողովրդի խաղաղ նպատակներով հավաքվելու և չարաշահումները դադարեցնելու պահանջով կառավարությանը դիմելու իրավունքը»:

³ Տե՛ս **Alexander Hamilton, James Madison, and John Jay, The Federalist**, Edited with an Introduction and Notes by Lawrence Goldman Oxford University Press Inc., New York 2008, էջ 381-382:

⁴ Տե՛ս *Marbury v. Madison*, 5. U. S. (1 Cranch) 137 (1803): Չնայած համընդհանուր տարածում գտած կարծիքին՝ դա ոչ առաջին որոշումն էր, որով Գերագույն դատարանը պարզել էր օրենքի սահմանադրականությունը, և ոչ էլ առաջինը, որով դատարանը օրենքը ճանաչել էր հակասահմանդրական: Պրոֆ. Կ. Վիթթինգտոնը 2009 թ. իրապարակված ուսումնասիրության մեջ ցույց է տվել, որ *Marbury v. Madison*-ը 6-րդ գործն էր, որտեղ դատարանը ստուգել էր օրենքի սահմանադրականությունը, և 3-րդը, որով դատարանը օրենքը ճանաչել էր սահմանադրությանը հակասող: Տե՛ս **K.E. Whittington, Judicial Review of Congress Before the Civil War**, „The Georgetown Law Journal” 2009/5, vol. 97, էջ 1285:

(judicial review), ինչպես նաև դատական գերակայության (judicial supremacy) դոկտրինայի հիմքերը:

Այս վճռով դատարանն արձանագրեց, որ Սահմանադրությունը բարձրագույն, հիմնարար օրենք է, որը ենթակա չէ փոփոխման սովորական եղանակով, ուստի Սահմանադրությանը հակասող օրենսդրի ակտերը առջինն չեն²:

Սայրցամաքային Եվրոպայում Սահմանադրության նորմատիվության ու գերակայության գաղափարների ձևավորման ու արմատավորման համար շատ ավելի երկար ժամանակ է պահանջվել: Այս առումով, Եվրոպայում 19-րդ դարը նախ և առաջ օրենքի գերակայության ձևավորման ու ամրապնդման ժամանակաշրջան էր, երբ միապետական կարգերը աստիճանաբար ստիպված էին ընդունել պառլամենտի գործուն մասնակցությունը պետության կառավարմանը: Թեև **1789 թ. օգոստոսի 26-ին ընդունված Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագրի**³ արեամբուլան ընդգծում էր «մարդու բնական, անօտարելի և սուրբ իրավունքների» կարևորությունը, իսկ Հռչակագրի 16-րդ հոդվածն էլ սահմանում էր, որ «յուրաքանչյուր հասարակություն, որտեղ ապահովված չէ իրավունքների երաշխավորումը, և հաստատված չէ իշխանությունների բաժանումը, ընդհանրապես չունի Սահմանադրություն», այնուամենայնիվ սահմանադրության նորմատիվության ու գերակայության գաղափարները ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ Եվրոպական մյուս երկրներում իրենց լիարժեք արտացոլումը աստիճանաբար գտան միայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո⁴:

Հարկ է նկատել, որ ամերիկյան և ֆրանսիական մարդու իրավունքների հռչակագրերի իրավական բնույթը արմատապես տարբերվում է միմյանցից: Ֆրանսիական հռչակագիրը չէր ընկալվում որպես անմիջականորեն պարտադիր և դատական կարգով պաշտպանության ենթակա իրավունքների ցանկ սահմանող փաստաթուղթ, այլ ավելի շուտ՝ որպես փաստաթուղթ, որը հռչակում էր հարատև սոցիալ-փիլիսոփայական ճշմարտություններ՝ «բոլոր ժամանակների և բոլոր երկրների համար»⁵: Այն չէր ձգտում լինել կոնկրետ սահմանադրություն, հավակնում էր ունենալ վերսահմանադրական բնույթ՝ ամրագրելով բարձր սկզբունքներ, որոնք սահմանադիրը դեռ պետք է կոնկրետացնի⁶:

¹ Տե՛ս, մասնավորապես, **R. Kay**, in: L. Alexander (ed.), *Constitutionalism*, 1998, էջ 16-63; **D. Kommers, J. Finn, G. Jacobs**, *American Constitutional Law, Essays, Cases and Comparative Notes*, 3rd ed., 2010, էջ 31: Հարկ է նկատել, որ դատական վերահսկողությունը (judicial review) անհրաժեշտաբար չի ենթադրում դատական գերակայություն (judicial supremacy): Քանի որ դատական վերահսկողության գործառույթը հստակորեն ամրագրված չէ ԱՄՆ Սահմանադրությամբ, առ այսօր շարունակում են բանավեճերն այն հարցի շուրջ, թե արդյո՞ք Գերագույն դատարանը պետք է դիտարկել որպես Սահմանադրության վերջին հեղինակավոր (authoritative) մեկնաբանող, որի որոշումները պարտադիր են իշխանության մյուս ճյուղերի, պետական կառավարման բոլոր մակարդակների համար (դատական գերակայություն (judicial supremacy)): Տե՛ս, մասնավորապես, **Walter F. Murphy**, *Judicial Supremacy*, ինչպես նաև **L. Alexander, F. Schauer**, *Non-judicial Interpretation of the Constitution (update) (2000)*, in: **L.W. Levy, K.L. Karst**, *Encyclopedia of the American Constitution*, New York: Macmillan Reference, USA, 2000, էջ 1487, 1823-1824:

² *Marbury v. Madison*, U.S. 177:

³ Հռչակագրի ֆրանսերեն և հայերեն տեքստերը տե՛ս Ֆրանսիայի Հանրապետության Սահմանադրությունը, Եր., 1996, էջ 13-20:

⁴ Տե՛ս **C. Schönberger**, *Der Vorrang der Verfassung*, in: I. Appel/G. Hermes/C. Schönberger (Hrsg.), *Öffentliches Recht im offenen Staat. Festschrift für Rainer Wahl zum 70. Geburtstag*, Berlin 2011, էջ 399-402:

⁵ Տե՛ս **H. Dreier**, *Vorbemerkungen vor Art. 1 GG*, in: H. Dreier (Hrsg.), *Grundgesetz Kommentar- Band I, 3. Auflage 2013*, էջ 55:

⁶ Տե՛ս **K. Stern**, *Das Staatsrecht der Bundesrepublik Deutschland Band III/1*, München 1988, էջ 97-98:

«Մարդու բնական, անօտարելի և սուրբ իրավունքները» ամրագրելուն զուգահեռ՝ Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի 6-րդ հոդվածը արտացոլում էր ժան-ժակ Ռուսոյի տեսությունն առ այն, որ օրենքը համընդհանուր կամքի (volonté générale) արտահայտություն է¹: Իսկ ավելի ուշ ընդունված 1791 թ. սեպտեմբերի 3-ի Ֆրանսիական Սահմանադրությունն ամրագրեց, որ «Ֆրանսիայում չկա որևէ իշխանություն, որը վեր է օրենքից»²: Արդյունքում, Ֆրանսիայում պատմականորեն արմատավորվեց այն մոտեցումը, որ ժողովրդի և նրա ընտրած ներկայացուցիչների ընդունած օրենքն է արտահայտում իրական ժողովրդավարական իրավունքի էությունը, և օրենքից բարձր չկա որևէ այլ իշխանություն: Ըստ այդմ, Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի դրույթների խախտումը Երրորդ (1870-1940) և Չորրորդ (1946-1958) հանրապետության տարիներին Ֆրանսիայում կարող էր հետևանք առաջացնել միայն, եթե կատարվել էր վարչական ակտով, բայց ոչ՝ եթե օրենքով³:

Ֆրանսիայում օրենքների սահմանադրականության վերահսկողության մեխանիզմ ներդրվեց միայն Հինգերորդ հանրապետության տարիներին՝ 1958 թ. Սահմանադրության⁴ ընդունմամբ և Սահմանադրական խորհրդի ստեղծմամբ: Այդուհանդերձ, Հինգերորդ հանրապետության գոյության առաջին 15 տարիների ընթացքում սահմանադրական վերահսկողության մեխանիզմը Ֆրանսիայում խիստ սահմանափակ էր⁵, չէր տարածվում մարդու հիմնական իրավունքների վրա և հազվադեպ էր կիրառվում:

Ֆրանսիայի համար շրջադարձայինը 1971 թ. էր, երբ Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը հուլիսի 16-ի հիմնարար որոշմամբ⁶ էականորեն ընդլայնեց «սահմանադրություն» հասկացության շրջանակը: Սահմանադրական վերահսկողության հիմքերը նախատեսող Սահմանադրության 61-րդ հոդվածի իմաստով Սահմանադրական խորհուրդը ձանաչեց 1958 թ. Սահմանադրության պրեամբուլայի⁷ և դրանով իսկ՝ այն բոլոր ակտերի սահմանադրական արժեքը, որոնց պրեամբուլան հղում է անում⁸:

Ավելի ուշ օրենքի՝ որպես ժողովրդի կամքի արտահայտության դասական հանցակարգը Սահմանադրական խորհուրդը վերաձևակերպեց հետևյալ կերպ. օ-

¹ Տե՛ս **ժան-ժակ Ռուսո**, Հասարակական դաշինքի մասին կամ քաղաքական իրավունքի սկզբունքները, Եր., 2016, գիրք II, գլուխ 1, էջ 51:

² La Constitution française du 3 septembre 1791, բաժին 3, գլուխ 2, հոդված 3: 1791 թ. Սահմանադրության տեքստը տե՛ս Les Constitutions de la France, de Charles Debbasch et Jean-Marie Pontier 3. éd., Paris 1996, էջ 9-40: Ռուսերեն թարգմանությունը տե՛ս Конституции и законодательные акты буржуазных государств XVII - XIX вв.: Англия, США, Франция, Италия, Германия: Сборник документов. Сост. Н. Н. Блохин, под ред. П. Н. Галанзы. М., 1957, էջ 250-282:

³ Տե՛ս **F. Hamon, M. Troper**, Droit Constitutionnel, 36. éd., Paris 2015, էջ 61:

⁴ Տե՛ս Constitution du 4 octobre 1958, J.O. du 5 octobre 1958, էջ 9151-9172:

⁵ Միայն 1974 թ. հոկտեմբերի 29-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում 60 պատգամավորների կամ սենատորների նույնպես իրավունք վերապահվեց դիմելու Սահմանադրական խորհուրդ: Տե՛ս Loi constitutionnelle n° 74-904 du 29 octobre 1974 portant révision de l'article 61 de la Constitution, J.O. du 30 octobre 1974, էջ 11035:

⁶ Տե՛ս Décision n° 71-44 DC du 16 juillet 1971, Loi complétant les dispositions des articles 5 et 7 de la loi du 1er juillet 1901 relative au contrat d'association, Journal officiel du 18 juillet 1971, էջ 7114:

⁷ Տե՛ս **F. Hamon, M. Troper**, նշվ. աշխ., էջ 772, 774-775:

⁸ Մասնավորապես, 1946 թ. Ֆրանսիական Սահմանադրության պրեամբուլա, Մարդու և քաղաքացու իրավունքների 1789 թ. Հռչակագիր, Շրջակա միջավայրի մասին 2004 թ. Խարտիա: Loi constitutionnelle n° 2005-205 du 1er mars 2005 relative à la Charte de l'environnement, JORF n°0051 du 2 mars 2005, էջ 3697:

րենքն «արտահայտում է ընդհանուր կամքը միայն Սահմանադրության հարգման շրջանակներում»¹:

Թեև Ֆրանսիայում Սահմանադրության գերակայությունը և օրենսդրի կաշկանդվածությունը Սահմանադրությամբ ուղղակիորեն ամրագրված չեն, սակայն այն բխեցվում է Սահմանադրական խորհրդին վերաբերող 61-րդ, 61-1-րդ և 62-րդ հոդվածներից²: Այն, որ Սահմանադրությունը գտնվում է «ներքին իրավական համակարգի գագաթին», արձանագրվել է Սահմանադրական խորհրդի մի շարք որոշումներում³:

ԱՄՆ-ի և Ֆրանսիայի Սահմանադրությունների համեմատ Սահմանադրության նորմատիվությունն ու գերակայությունն առավել հստակ արտահայտված են *Գերմանիայի* 1949 թ. Հիմնական օրենքում, որի 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «օրենսդրությունը կաշկանդված է սահմանադրական կարգով, գործադիր իշխանությունը և արդարադատությունը կաշկանդված են օրենքով և իրավունքով»: Սահմանադրության այս նորմը ամրագրում է հանրային իշխանության բոլոր մարմինների կաշկանդվածությունը Հիմնական օրենքով: Միաժամանակ, այդ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասը հատուկ ամրագրում է *հիմնական իրավունքների անմիջական գործողությունը*՝ սահմանելով, որ «հիմնական իրավունքները կաշկանդում են օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններին՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Հիմնական օրենքի վերը նշված երկու հոդվածների ծագումնաբանությունը հասկանալու համար անհրաժեշտ է համառոտ անդրադարձ կատարել Գերմանիայում հիմնական իրավունքների էվոլյուցիայի հիմնական փուլերին⁴: Ի տարբերություն ԱՄՆ-ի և Ֆրանսիայի, որտեղ մարդու իրավունքների հռչակագրերը ընդունվեցին հեղափոխության արդյունքում, հիմնական իրավունքներն առաջին անգամ ամրագրող հարավգերմանական առաջին սահմանադրությունները⁵ հիմնականում թագավորների կողմից իրենց հպատակներին շնորհված սահմանադրություններ էին: Վաղ կոնստիտուցիոնալիզմի շրջանի, ինչպես նաև հետագայում գերմանական առանձին երկրներում ընդունված սահմանադրությունները թեև պարունակում էին հպատակների իրավունքների վերաբերյալ քիչ թե շատ ծավալուն կարգավորումներ, սակայն հասկացվում էին որպես ծրագրային դրույթներ, որոնք չէին կարող անմիջականորեն կիրառվել: Հպատակների իրավունքների պաշտպանության կարևո-

¹ Sté u Conseil Constitutionnel, Décision n° 85-197 DC du 23 août 1985, Journal officiel du 24 août 1985, էջ 9814:

² Սահմանադրության 61-րդ հոդվածը վերաբերում է օրգանական օրենքների, հանրաքվեի դրվող օրինագծերի և խորհրդարանի պալատների նախնական սահմանադրական վերահսկողությանը, իսկ 61-1-րդ հոդվածը՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները և ազատությունները խախտող օրենքների սահմանադրական վերահսկողությանը: Սահմանադրության 62-րդ հոդվածը կարգավորում է այդ ակտերի վերաբերյալ Սահմանադրական խորհրդի որոշումների իրավական հետևանքները:

³ Sté u H. Fulchiron, L. Eck, Introduction au droit français, Paris 2016, էջ 36: Սահմանադրական խորհուրդը օգտագործում է «au sommet de l'ordre juridique interne» արտահայտությունը: Sté u Décision n° 2004-505 DC, 19 novembre 2004, cons. 9 et 10, Journal officiel du 24 novembre 2004, էջ 19885, Décision n° 2007-560 DC, 20 décembre 2007, cons. 3 à 10, Journal officiel du 29 décembre 2007, էջ 21813, Décision n° 2009-595 DC, 3 décembre 2009, cons. 14 et 22, Journal officiel du 11 décembre 2009, էջ 21381, Décision n° 2012-653 DC, 9 août 2012, cons. 8 à 10, Journal officiel du 11 août 2012, էջ 13283:

⁴ Sté u Մ. Չաքս, Սահմանադրական իրավունք II. Հիմնական իրավունքներ, մաս I. Հիմնական իրավունքների տեսություն, 2-րդ հրատ., Եր., 2015, էջ 16-24:

⁵ Բավարիա (1818), Բադեն (1818), Վյուրթեմբերգ (1819), Հեսսեն (1820): Այդ սահմանադրությունների համար հիմք էր ծառայել միապետական սկզբունքի վրա հիմնված 1814 թ. ֆրանսիական սահմանադրական խարտիան:

րագույն օրենքն էր. հպատակների ազատությանը և սեփականությանը միջամտելու համար միապետը կաշկանդված էր պառլամենտի համաձայնությամբ¹: 1848 թ. հեղափոխության արդյունքում համագերմանական մակարդակով հիմնական իրավունքների արդիական երաշխիքներ ամրագրվեցին 1849 թ. մարտի 28-ի սահմանադրությունում², որը, սակայն, միասնական գերմանական կայսրության հիմնադրման ձախողումից հետո չկենսագործվեց: Միևնույն ժամանակ այդ հիմնական իրավունքներից շատերը ներառվեցին գերմանական առանձին երկրների սահմանադրություններում: Գերմանիայի ամենամեծ պետության Պրուսիայի 1850 թ. հունվարի 31-ի Սահմանադրությունում³ «պրուսիացիների իրավունքների» հիմնական նշանակությունը դիտվում էր ոչ թե անհատական ազատությունների երաշխավորման, այլ օրենքի վերապահման ապահովման մեջ: Այդ իրավունքները գործնականում և դոկտրինայում ընկալվում էին որպես կառավարչության օրինականության մի հատուկ դրսևորում: Օրենսդրի համար դրանք անմիջականորեն կիրառելի իրավունքներ չէին, այլ միայն ուղենիշներ: Կառավարչությունը կաշկանդված էր հիմնական իրավունքներով այնքանով, որքանով սահմանադրությամբ երաշխավորված իրավունքներին միջամտությունը պետք է ունենար օրինական հիմք: Նման պարագայում հիմնական իրավունքների փաստացի ազդեցությունը կախված էր ոչ թե սահմանադրությունից, այլ օրենքից, որն էլ իր հերթին միապետի և երկրամասային պառլամենտի (Լանդթագի) միջև ուժերի հարաբերակցության արդյունք էր⁴:

Գերմանիայի միավորումից հետո ընդունված 1871 թ. ապրիլի 16-ի սահմանադրություն⁵ ընդհանրապես հրաժարվեց ներառել հիմնական իրավունքները մասամբ այն պատճառով, որ դրանք արդեն իսկ ամրագրված էին գերմանական առանձին պետությունների սահմանադրություններում: 19-րդ դարի գերմանական դուալիստական միապետությունը, որը հիմնված էր միմյանցից լիովին տարբեր լեզուների վրա (ժառանգական միապետ և ժողովրդի կողմից ընտրված պառլամենտ⁶), խոչընդոտում էր սահմանադրության գերակայության ձևավորումը: Հիմնական իրավունքներն ուղղված էին ազատությունը սահմանափակող միապետական գործադիր իշխանության դեմ, ուստի անհատական ազատության հիմնական երաշխավորը դիտվում էր ժողովրդի կողմից ընտրվող պառլամենտը և վերջինիս կողմից ընդունված օրենքը: Քաղաքացիների իրավական դրության համար վճռորոշ նշանակություն ունեին ոչ թե գերմանական առանձին պետությունների սահմանադրություններում ամրագրված հիմնական իրավունքները, այլ այն համագերմանական օրենքները, որոնք 1867 թ. սկսած ընդունվեցին հիմնական իրավունքներին

¹ Օրինակ, Բավարիայի 1818 թ. Սահմանադրության 7-րդ բաժնի 2-րդ հոդվածը սահմանում էր, որ «Առանց Թագավորության խավերի խորհրդի և համաձայնության ոչ մի ընդհանուր նոր օրենք, որը վերաբերում է անձի ազատությանը կամ քաղաքացու սեփականությանը, չի կարող ընդունվել, և ոչ էլ արդեն գոյություն ունեցողը փոփոխվել, աուտենտիկ կերպով պարզաբանվել կամ չեղյալ հայտարարվել»: Սահմանադրության ռուսերեն թարգմանությունը տե՛ս *Современные конституции: сборник действующих конституционных актов*. Пер. под ред. и с вступит. очерками пр.-доц. В. М. Гессена и доц. бар. Б. Э. Нольде. Т. 1.- СПб., 1905, էջ 43-92:

² Պաուլսկիրխեի Սահմանադրության ռուսերեն թարգմանությունը տե՛ս *Конституции и законодательные акты буржуазных государств XVII - XIX вв.*, էջ 519-545:

³ Սահմանադրության ռուսերեն թարգմանությունը Տե՛ս նույն տեղում, էջ 548-558:

⁴ Տե՛ս **R. Wahl**, *Der Grundsatz der Verhältnismäßigkeit: Ausgangslage und Gegenwartsproblematik*, in: *Verfassungsstaatlichkeit im Wandel. Festschrift für Thomas Würtenberger zum 70. Geburtstag*, Berlin 2013, էջ 826:

⁵ Սահմանադրության ռուսերեն թարգմանությունը տե՛ս *Конституции и законодательные акты буржуазных государств XVII - XIX вв.*, նշվ. աշխ., էջ 558-576:

⁶ Ուսխստագն ընտրվում էր ընդհանուր և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա:

առնչվող բազմաթիվ բնագավառներում¹: Այդ օրենքները, որոնք պարտադիր էին ամբողջ կայսրության համար, իրենց իրավական և փաստացի ուժով ավելի կարևոր էին, քան թե գերմանական առանձին պետությունների հիմնական իրավունքները²:

Միապետության տապալումից և հանրապետության հռչակումից հետո 1919 թ. օգոստոսի 11-ին ընդունված Վայմարյան սահմանադրությունն առաջին անգամ համագերմանական մակարդակով ամրագրեց գերմանացիների հիմնական իրավունքները և պարտականությունները³: Այդուհանդերձ, Վայմարյան սահմանադրությունը և գերմանական սահմանադրական դոկտրինան ի վիճակի չեղան լուծելու 19-րդ դարի գերմանական կոնստիտուցիոնալիզմի արմատական թերությունները՝ սահմանադրության առավելապես քաղաքական ու ծրագրային բնույթը և սահմանադրության իրավական գերակայության ապահովման խնդիրը: Այդ ժամանակ ևս գերակշռող դոկտրինան ելնում էր այն բանից, որ սահմանադրությունը օրենսդրության նկատմամբ իրենից միայն դիսպոզիտիվ իրավունք է ներկայացնում, քանի որ «սահմանադրությունը ոչ թե օրենսդիր իշխանությունից վեր է գտնվում, այլ գտնվում է վերջինիս տնօրինության ներքո», և սահմանադրությունը սովորական օրենքի նկատմամբ ավելի բարձր աստիճանի նորմ չէ⁴:

Վայմարյան սահմանադրության գործողության ցածր նորմատիվությունը հետևանք էր նաև այն բանի, որ ազատության դասական իրավունքներից զատ, որոնք ըստ սահմանադրության տեքստի գործող իրավունքներ էին, սահմանադրությունը պարունակում էր բազմաթիվ ծրագրային դրույթներ, օրենսդրական առաջադրանքներ և պետության նպատակներ, որոնք կարող էին գործել միայն օրենքով դրանց հետագա կոնկրետացումից հետո⁵: Շատ կարևոր էր նաև այն հանգամանքը, որ բացակայում էր սահմանադրության նորմերի գործողության ինստիտուցիոնալ երաշխավորման տեսանկյունից կարևորագույն օղակը՝ սահմանադրական դատարանը, իսկ սովորական դատարանների կողմից օրենքների նորմերի ապակենտրո-

¹ Մինչև 1919 թ. ընդհանուր առմամբ ընդունվեցին 18 նման օրենքներ, որոնք մասնավորապես վերաբերում էին ազատ տեղաշարժին, ձեռնարկատիրական գործունեությանը, կրոնական հավասարությանը, մամուլի, միավորումների և հավաքների ազատությանը:

² 1919 թ. իրատարակված գերմանական սահմանադրական իրավունքի դասագրքի վերջին իրատարակությունում Գ. Մայերը և Գ. Անշուցը այդ հիմնական իրավունքների վերաբերյալ գրել են. «Նման ընդհանուր պահանջները, սակայն, հիմնականում տառապում են այն վատ վիճակից, որ նրանք պիտանի չեն անմիջական գործնական կիրառման համար, քանի որ իրենց իրագործման համար հատուկ կիրարկող օրենքների կարիք ունեն և որոնց բացակայության պարագայում դառնում են անօգուտ»: Տե՛ս **G. Meyer, G. Anschütz**, *Lehrbuch des deutschen Staatsrechts*, 8. Aufl., unveränd. Nachdruck der 7. Aufl. (von 1919), Berlin 2005, էջ 955-956:

³ Վայմարյան Սահմանադրության ռուսերեն թարգմանությունը տե՛ս Конституции буржуазных стран: Великие державы и западные соседи СССР. Т. 1 - М., Л.: Соцэкгиз, 1935, էջ 83-115:

⁴ Տե՛ս **G. Anschütz**, *Die Verfassung des Deutschen Reiches vom 11. August 1919*, 14. Aufl., Berlin 1933, էջ 401 և 371: Չնայած դոկտրինայի փոքրամասնությունը շատ ավելի համոզիչ փաստարկներ էր բերում սահմանադրության նորմատիվության և գերակայության վերաբերյալ, սակայն դրանք գործնական նշանակություն ձեռք չբերեցին:

⁵ Ինչպես ցույց է տվել Հ. Դրայերը, իրականությանը չեն համապատասխանում գերմանական գրականությունում տարածված այն պնդումները, որոնց համաձայն Վայմարյան Սահմանադրության հիմնական իրավունքները միայն օրենսդրի համար ծրագրային դրույթներ և ուղենիշներ են եղել: Ըստ նրա, այդ սահմանադրությունում ամրագրված դասական պաշտպանիչ իրավունքները, ինչպես նաև քաղաքական մասնակցությանը վերաբերող իրավունքները անմիջականորեն գործող իրավունք են եղել: Տե՛ս **H. Dreier**, Art. 1 III, in: *H. Dreier, Grundgesetz Kommentar*, Band I, 3. Auflage 2013, էջ 284; **H. Dreier**, *Die Zwischenkriegszeit*, § 4, in: *D. Merten, H.-J. Papier (Hrsg.), Handbuch der Grundrechte in Deutschland und Europa*, Bd. 1, Heidelberg 2003, էջեր 162-165:

նացված վերահսկողությունը շատ վիճելի էր դոկտորինայում և որևէ գործնական նշանակություն չուներ¹:

Վայմարյան սահմանադրության ձախողման հիմնական դասերը գերմանական սահմանադիրը օգտագործեց 1949 թ. Սահմանադրությունում, և բոլորովին էլ պատահական չէր, որ 1949 թ. Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրությունը ամրագրեց ինչպես պետական իշխանության բոլոր մարմինների կաշկանդվածությունը Սահմանադրությամբ, այնպես էլ՝ *հիմնական իրավունքների անմիջական գործողության* պահանջը: Դրանով սահմանադիրը ցանկանում էր վերջ տալ հիմնական իրավունքների գործողության վերաբերյալ այն անորոշությանը, որը կար Վայմարյան սահմանադրության տարիներին²: Սահմանադրության մշակման ժամանակ պառլամենտական խորհրդի անդամ Կ. Շմիդը ընդգծել է, որ հիմնական իրավունքները պետք է լինեն «ոչ թե պարզապես դեկլարացիաներ, հռչակագրեր կամ դիրեկտիվներ, ... այլ անմիջականորեն գործող դաշնային իրավունք, որի հիման վրա յուրաքանչյուր գերմանացի, մեր երկրի յուրաքանչյուր բնակիչ պետք է դատարանում կարողանան հայց ներկայացնել»³:

Հիմնական օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասը, բացի Վայմարյան սահմանադրության ավանդույթների դեմ ուղղված լինելուց, ունի բավականին հստակ և ինքնուրույն իրավական բովանդակություն: Հիմնական իրավունքներով օրենսդիր կաշկանդվածությունից զատ (ինչը բխում է նաև Հիմնական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասից), այն սահմանում է նաև գործադիր և դատական իշխանությունների կաշկանդվածությունը հիմնական իրավունքներով՝ անկախ համապատասխան օրենքի առկայությունից: Եթե չլիներ Հիմնական օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթը, ապա Սահմանադրությունը կարող էր մեկնաբանվել այնպես, որ հիմնական իրավունքները կաշկանդում են միայն օրենսդիր իշխանությանը և միայն օրենքի միջոցով են միջնորդավորում հիմնական իրավունքների գործողությունը ինչպես քաղաքացիների, այնպես էլ՝ գործադիր և դատական իշխանությունների համար: Հիմնական օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասը, այսպիսով, վերջակետ էր դնում տասնամյակներ տևած այն բանավեճին, թե հիմնական իրավունքները ակտուալ⁴, այժմ գործող, թե՞ դեռ ստեղծվելիք, պոտենցիալ իրավունքներ են: Ըստ Դ. Մերտենի հիմնական իրավունքի դրույթները որպես ակտուալ սահմանադրական իրավունք տարբերվում են սահմանադրության այն դրույթներից, որոնք պետություն-մարդ հարաբերություններում անմիջական ներգործություն ունենալու համար իրացման, կիրարկման կամ կոնկրետացման կարիք ունեն⁴: Կարճ ասած՝ հիմնական իրավունքները գործում են որպես անմիջական պոզիտիվ իրավունք այնպես, ինչպես սովոր-

¹ St´u H. Dreier, Art. 1 III, in: H. Dreier, Grundgesetz Kommentar- Band I, 3. Auflage 2013, էջ 286:

² Պառլամենտական խորհրդի Հիմնարար հարցերի և հիմնական իրավունքների հանձնաժողովի նախագահ պրոֆ. Հ. Ֆոն Մանգոլդթը, մատնանշելով այն իրավական դժվարությունները, որոնք առաջացրել էին Վայմարյան Սահմանադրության հիմնական իրավունքների լայն ու անորոշ դրույթները, իր գրավոր զեկույցում նշել է. «Հնարավորության դեպքում պետք է խուսափել այդ դժվարություններից: Ուստի մտադրությունն այն էր, որ հիմնական իրավունքները այնպես ձևակերպվեն, ինչպես դա արված է 1-ին հոդվածի 3-րդ մասում, որ դրանք հնարավոր լինի դիտարկել որպես անմիջականորեն գործող իրավունք, որը հավասարապես կաշկանդում է ինչպես օրենսդիրն, այնպես էլ կառավարչությանը և դատարաններին, ընդ որում՝ ինչպես դաշնությունում, այնպես էլ երկրամասերում»: Հղումը ըստ K. Stern, Das Staatsrecht der Bundesrepublik Deutschland, նշվ. աշխ., էջ 1193:

³ Հղումը ըստ H. Dreier, Vorbemerkungen vor Art. 1 GG, in: H. Dreier, Grundgesetz Kommentar, նշվ. աշխ., էջ 63:

⁴ St´u D. Merten, § 35 Begriff und Abgrenzung der Grundrechte, in: Merten/Papier (Hrsg.), Handbuch der Grundrechte in Deutschland und Europa, Bd. II, Heidelberg 2006, էջ 544:

րական օրենքները¹: Եթե 1919 թ. Վայմարյան Սահմանադրության պայմաններում հիմնական իրավունքները կարելի էր պատկերավոր բնորոշել որպես «*հիմնական իրավունքներ՝ միայն օրենքների շրջանակում*», ապա 1949 թ. Սահմանադրության համար տեղին է ճիշտ հակառակը. օրենքները գործում են «*միայն հիմնական իրավունքների շրջանակում*»²:

Հետևելով գերմանական Հիմնական օրենքի օրինակին՝ հիմնական իրավունքներով կաշկանդվածության վերաբերյալ սահմանադրական նորմեր հետազայում ամրագրեցին *արևմտաեվրոպական երկրներից* Պորտուգալիան (հոդված 18, մաս 1), Իսպանիան (հոդված 53, մաս 1), Անդորրան (հոդված 39, մաս 1): Եթե Իսպանիայի Սահմանադրությունը խոսում է միայն հիմնական իրավունքներով կաշկանդվածության մասին, ապա Պորտուգալիայինը՝ սահմանում է, որ «իրավունքների, ազատությունների և երաշխիքների վերաբերյալ սահմանադրական դրույթները կիրառվում են անմիջականորեն և կաշկանդում են հանրային-իրավական և մասնավոր իրավական հաստատություններին»:

Ո՞նքալ սոցիալիզմի երկրների փուլումից հետո հիմնական իրավունքների անմիջական գործողության կամ կիրառության վերաբերյալ նորմեր ընդունեցին Սլովենիան (հոդված 15), Սերբիան (հոդված 18), Կոսովոն (հոդված 22), Ռուսաստանը (հոդված 18, նախադասություն 1), Ղրղզստանը (հոդված 16, մաս 1)³, Վրաստանը (հոդված 7) և Թուրքմենստանը (հոդված 27)⁴:

Ինչ վերաբերում է Սահմանադրության բոլոր նորմերի անմիջական գործողության իրավական ամրագրմանը, այն խորթ է արևմտաեվրոպական սահմանադրական իրավունքին: Նման ճանապարհով գնացել են միայն որոշ հետխորհրդային⁵ և հետսոցիալիստական⁶ երկրներ: Դա պատահական չէ, քանի որ սոցիալիզմի տարիներին սահմանադրությունը, որպես այդպիսին, դիտարկվում էր առավելապես որպես քաղաքական-գաղափարախոսական փաստաթուղթ, իսկ դրա նորմերը առավելապես ծրագրային դրույթներ կամ ընդհանուր ուղեցուցիչներ էին: Սոցիալիստական իրականությունում կոնկրետ գործերի լուծման համար դատարանների կողմից սահմանադրության նորմերին հղումը խիստ հազվադեպ երևույթ էր, և ամենակարևորը՝ բացակայում էր սահմանադրության անմիջական կիրառությունը ապահո-

¹ Տե՛ս **C. Degenhart**, § 61 Grundrechtsausgestaltung und Grundrechtsbeschränkung, in: Merten/Papier (Hg.), Handbuch der Grundrechte in Deutschland und Europa, Bd. III, Heidelberg 2009, էջ 258:

² Տե՛ս **H. Krüger**, Die Einschränkung von Grundrechten nach dem Grundgesetz, in: DVBl. 1950, էջ 626:

³ Ռուսաստանի (հոդված 15, մաս 1) և Ղրղզստանի (հոդված 6, մաս 1) Սահմանադրությունները միաժամանակ նախատեսում են նաև ամբողջ Սահմանադրության ուղղակի գործողությունը:

⁴ Հատկանշական է, որ Թուրքմենստանի 1992 թ. Սահմանադրությունը նախատեսում էր ամբողջ Սահմանադրության ուղղակի գործողություն (հոդված 5, մաս 2), սակայն 2016 թ. սահմանադրական փոփոխություններով այդ դրույթը վերացվեց, և անմիջական գործողությունը տարածվեց միայն հիմնական իրավունքների վրա:

⁵ Լիտվա (հոդված 6), Տաջիկստան (հոդված 10, մաս 1), Ղազախստան (հոդված 4, մաս 2), Ղրղզստան (հոդված 6, մաս 1), Ռուսաստան (հոդված 15, մաս 1), Ուկրաինա (հոդված 8, մաս 3) սահմանադրություններում:

⁶ Բուլղարիան (հոդված 5, մաս 2), Լեհաստանը (հոդված 8) և Ալբանիան (հոդված 4, մաս 3): Ի տարբերություն Բուլղարիայի, Լեհաստանում և Ալբանիայում Սահմանադրության նորմերի անմիջական գործողությունը բացարձակ չէ, քանի որ սահմանված է «եթե Սահմանադրությամբ այլ բան նախատեսված չէ» վերապահումը: Ըստ լեհական հեղինակներից մեկի՝ դա վերաբերում է այն դեպքերին, երբ Սահմանադրությունը կոնկրետ հարցի կարգավորումը կախվածության մեջ է դնում պառլամենտի կողմից համապատասխան օրենքի ընդունումից (Տե՛ս **W. Skrzydło**, Konstytucja Rzeczypospolitej Polskiej, Komentarz, Wydanie IV, Krakow, 2002, էջ 20):

վող ամենագործուն մեխանիզմը՝ սահմանադրական վերահսկողության ինստիտուտը¹: Նման անցյալի համատեքստում սահմանադրության բոլոր նորմերի «անմիջական գործողության» սահմանադրական ամրագրումը հետսոցիալիստական երկրներում ոչ այլ ինչ էր, քան Սահմանադրության նորմատիվ-իրավաբանական ուժը ընդգծելուն ուղղված գաղափարախոսական, հոգեբանական քայլ՝ միտված սահմանադրական նորմերը չկիրառելու ավանդույթների հաղթահարմանը²: Այլապես, ինչպես նշում է Մ. Բազլայը, կա վտանգ, որ սահմանադրական նորմերը կծուլվեն այլ իրավական նորմերի մեջ՝ կորցնելով իրենց առաջնայնությունը³:

Այսպիսով, հիմնական իրավունքների անմիջական գործողության սահմանադրական ամրագրումը Գերմանիայում պայմանավորված է եղել երկրի պատմական փորձառությամբ, և հետագայում այս մոտեցումը ռեցեպցիայի է ենթարկվել այլ երկրների կողմից: Սակայն միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիմնական իրավունքների անմիջական գործողության սահմանադրական ամրագրումը համատարած պրակտիկա չէ: Հիմնական իրավունքները իրավաբանական առումով գործուն մեխանիզմներ դառնալու ճանապարհին որոշակի փուլեր են անցել, որոնցից *առաջինը* հիմնական իրավունքների պոզիտիվացումն է սահմանադրության մեջ, *երկրորդը*՝ սահմանադրության ընկալումը որպես նորմատիվ և ոչ միայն քաղաքական-գաղափարախոսական նշանակությունը ունեցող փաստաթուղթ: Սահմանադրության նորմատիվությունը, սակայն, կարող է դեռևս վերջնական պատասխան չտալ այն հարցին, թե արդյո՞ք հիմնական իրավունքի նորմերը, օբյեկտիվ իրավունքի նորմ լինելուց բացի, միաժամանակ *սուբյեկտիվ հանրային իրավունքներ* են ամրագրում: Հիմնական իրավունքի անմիջական գործողության սահմանադրական ամրագրման նպատակը հիմնական իրավունքների երաշխավորումն է որպես սուբյեկտիվ հանրային իրավունք: Միաժամանակ հարկ է նկատել, որ նման ամրագրման բացակայությունը անհրաժեշտաբար չի հանգեցնում հիմնական իրավունքների՝ որպես սուբյեկտիվ հանրային իրավունքների ժխտմանը: Ժամանակակից իրավական բազմաթիվ պետությունների փորձը ցույց է տալիս, որ անգամ առանց հիմնական իրավունքների անմիջական գործողության սահմանադրական ամրագրման էլ այս երկրներում հիմնական իրավունքները գործնականում մեկնաբանվում և կիրառվում են որպես սուբյեկտիվ հանրային իրավունքներ և ապահովվում համապատասխան արդարադատական մեխանիզմներով (նախ և առաջ՝ սահմանադրական արդարադատության մեխանիզմի միջոցով):

Սահմանադրության նորմատիվությունը, սահմանադրության գերակայությունը և սահմանադրական արդարադատությունը 20-րդ դարի երկրորդ կեսից հետո ձևավորված ժամանակակից սահմանադրական պետությանը բնորոշ առանցքային բա-

¹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան**, Հիմնական իրավունքների սահմանադրական կարգավորման էվոլյուցիան Հայաստանում//Պետություն և իրավունք, թիվ 1 (86) 2020 թ., էջ 13-17:

² Տե՛ս **Գ. Сальников**, Прямое действие Конституции России: исторический аспект// Актуальные проблемы правовой науки: межвузовский сборник научных трудов / сост. и отв. ред. С. Шаляпин, Архангельск, Поморский гос. ун-тим. М. В. Ломоносова, 2006, Вып. 4, էջ 233: Ինչպես նշում է Տ. Ույախովսկայան, Ռուսաստանի Ղաշնության Սահմանադրության նախագծի մշակման արձանագրությունների ուսումնասիրությունը տպավորություն է ստեղծում, որ քննարկումների մասնակիցները իրենք էլ բավական հեղիեղուկ էին պատկերացնում Սահմանադրության ուղղակի գործողության վերաբերյալ դրույթի իմաստային բեռը: Տե՛ս **И. Ряховская**, Развитие идеи о прямом действии Конституции России (по материалам конституционной комиссии и конституционного совещания), Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. Вопросы теории и практики, Тамбов: Грамота, 2012. № 12 (26): в 3-х ч. Ч. I., էջ 204:

³ Տե՛ս **М. Баглай**, Конституционное право Российской Федерации, 11-е издание, М., 2015, էջ 84:

դադրատարրեր են: Սահմանադրական պետության այդ երեք նորմատիվ կառուցվածքային տարրերը իրենց հստակ արտահայտություն են գտել նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում:

(շարունակությունը նախորդ համարում)

НЕПОСРЕДСТВЕННОЕ ДЕЙСТВИЕ КОНСТИТУЦИИ И ПРИМЕНЕНИЕ ПРАВОВЫХ НОРМ В КОНТЕКСТЕ ВЕРХОВЕНСТВА КОНСТИТУЦИИ (Часть 1)

Вардан Погосян

Член Специальной комиссии по конституционным реформам 2013–2015 гг.

Нора Саргсян

*Доцент кафедры европейского и международного права ЕГУ,
кандидат юридических наук*

Конституция Республики Армения как в редакции 1995 года (статья 6, часть 2), так и в версии 2005 года (статья 6, часть 1) предусматривала, что Конституция имеет высшую юридическую силу и ее нормы применяются непосредственно. В то же время, Конституции в редакции 2005 года предусматривала, что государство ограничено основными правами человека и гражданина как непосредственно действующим правом (статья 3, часть 3). Статья 5 Конституции в редакции 2015 г. устранила общее положение о прямом действии всей Конституции (часть 1), сохранив его только в отношении основных прав и свобод (статья 3, часть 3).

В статье анализируется происхождение понятия «прямое действие» Конституции, его сущность и необходимость его закрепления в конституции (I). Далее разъясняется сущность и необходимость конституционного закрепления прямого действия основных прав (II), после чего обсуждается практический вопрос, совпадает ли иерархия правовых норм с иерархией их применения (III).

THE DIRECT EFFECT OF THE CONSTITUTION AND THE APPLICATION OF LEGAL NORMS IN THE CONTEXT OF THE SUPREMACY OF THE CONSTITUTION (Part 1)

Vardan Poghosyan

Member of the Specialized Commission for Constitutional Reforms of 2013-2015

Nora Sargsyan

*Associate Professor at the YSU Chair of European and International Law,
Candidate of Legal Sciences*

The Constitution of the Republic of Armenia both in the version of 1995 (Article 6, part 2), as well as in the version of 2005 (Article 6, part 1) provided that the Constitution had a supreme legal force and its norms apply directly. At the same time, the Constitution in the version of 2005 stipulated that the state was restricted by the fundamental human rights as the directly applicable law (Article 3, part 3). Article 5 of the Constitution in the version of 2015 has eliminated the general provision on the direct effect of the whole Constitution (part 1), maintaining it only with respect to fundamental rights and freedoms (Article 3, part 3).

This article analyzes the origin of the concept of "direct effect" of the Constitution, its essence and the need for its pronouncement in the constitution (I). Then the essence and necessity of the constitutional declaration of direct effect of fundamental rights is explained (II). Afterwards, the practical question whether the hierarchy of legal norms is the same as the hierarchy of their application is discussed (III).

Բանալի բառեր – Սահմանադրություն, հիմնական իրավունքներ, անմիջական գործողություն, իրավական նորմերի գործողության և կիրառման աստիճանակարգություն, Սահմանադրության գերակայություն, բարձրագույն իրավաբանական ուժ, սահմանադրական վերահսկողություն:

Ключевые слова: Конституция, основные права, прямое действие, иерархия применения правовых норм, верховенство Конституции, высшая юридическая сила, конституционный контроль.

Keywords. Constitution, fundamental rights, direct effect, hierarchy of application of legal norms, supremacy of the Constitution, supreme legal force, constitutional control.